ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Չարենցավանի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար **աղբահանության ծառայությունների** ձեռքբերման նպատակով կազմակերպված <<**ՀՔ-ԳՀԾՁԲ-18/1**>> ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում **2018 թվականի հունվարի 17-ին** կնքված N <<**ՀՔ-ԳՀԾՁԲ-18/1**>> պայմանագրում **2018 թվականի հոկտեմբերի 08-ին** կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ: Աղբահանության ծավալների և աղբատար մեքենաների երթուղիների ավելացմամբ պայմանավորված անհրաժեշտություն է առաջացել կնքված պայմանագրի գինն ավելացնել ընդհանուր պայմանագրի գնի տասը տոկոսի չափով:

Փոփոխության նկարագրություն: Ծառայությունների մատուցումն իրականացվելու նպատակով նախատեսվել են համապատասխան ֆինանսական միջոցներ և կողմերի միջև կնքվել է համապատասխան համաձայնագիր:

Փոփոխության հիմնավորում: ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 56-րդ կետ:

Պատվիրատու՝ **Չարենցավանի համայնքապետարան**